



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԲ . 1865 — ԻԱ ՏԱՐԻ . — ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա Շ Ո Տ Ա

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԶՄԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(Տես յերես 145 — 177 — 209 — 241)

ԺԴ. Ահմէտ կամ Մուհամմէտ ու տիկանը վոնտելէն ետե՛ Աշոտ անոր թուղած խառնակութիւնները սկսաւ շրտկել և անոր կուսակիցներն այլ զսպել և նախ հիւսիսային ու վրաց կողմերը գնաց. ուր, գիտնալու է, որ այս Ահմէտին նախնիքն ամիրայութեամբ կ'իշխէին Տփլիսի կողմերը, և ատեն մը բոլոր վրաց կուսակալ էին. իր հայրն իսլիկ կամ իսլիտ յետ երկայն ատեն տիրելու և քանի մ'անգամ հեռանալու կամ հալածուելու՝ այն կողմերը մեռեր էր պատերազմի մէջ. և տեղը տիրացեր էր Սահակ իպն-իսմայէլ, զոր տպաննեց Բուղա երբ առաւ զՏփլիս, ինչպէս 'ի սկզբան յիշեցի. և նորէն իշխանութիւնը տուաւ իսլիտայ որդւոյն՝ այս յիշեալ Ահմէտին. բայց քիչ ատենէն սա իշխանութենէ փոխուելով Տրփլիսի տիրացաւ. կապլոց կամ կապլուզ

անուն մէկ մը, զոր պատմիչն վրաց՝ թէ այս Սահակայ ազգական անուանէ և թէ Աշոտոյ, իբր թէ ասոր հօրաքեռորդին ըլլայ. Ահմէտ երկրորդ անգամ ոստիկանութեան ատեն՝ ջանաց իր հօրը մահուան վրէժը պահանջել, և ուղածին պէս ձեռք խառնել վրաց և Գուգարաց իշխանութեանց մէջ. բայց երկար ժամանակ չի գտաւ. իր հալածուելէն ետե՛ կապլոց այլ սկսաւ ինքնիշխանաբար վարիլ և հակառակիլ ոչ միայն վրաց՝ այլ և մեր իշխանապետին. Աշոտ անոր այլ վրան գնաց (880) և օգնութեամբ Գորամայ իր հօրաքեռաուն բռնեց գնա, պատերազմի մէջ կուր գետոյն եզերները, և խաւրեց Յունաց երկիրը, անշուշտ վասլի հետ նոր ըրած դաշնադրութեանը վրայ վստահանալով. Տրփլիսը յանձնեց հաւանօրէն Դաւթի՛ եղբորորդւոյն Գորամայ, և ասոր բաժնէն

առաւ Աշոցք գաւառը՝ որ անմիջապէս սահմանակից և գրեթէ մասն էր իր բընիկ երկրին՝ Շիրակայ։ Այս Գորամն քիչ ատենէն թողուց իր իշխանութիւնը և կրօնաւորեցաւ. տեղն անցաւ որդին՝ Նարս կամ Ներսէս, որ խռովարար իշխանասիրութեամբ սպաննեց ըզրաւիթ (884) և շատ շփոթութեանց պատճառ եղաւ. որոյ համար յետ ժամանակի դարձեալ պէտք եղաւ Աշոտոյ գալ և կարգ դնել այս կողմերս։ Այն ատեն այս վրաց և վրահայոց երկիրները չորս հինգ բաժին էին, իւրաքանչիւր առանձին իշխանաց ձեռք, որք ամէնքն այլ իրարու ազգակից էին՝ ի նոյն Բագրատունեաց ցեղէ. գլխաւորն էր վրաց իշխանն (կամ Քարթլի կուրապաղատն), յետոյ Գուգարաց իշխանն, Սամցխէի (Ախալցխէի) իշխանն և Արտանուշայ իշխանն. որք Սիւնեաց և Վասպուրականի իշխանաց նման Աշոտոյ իշխանապետութիւնը ճանչնային, և ոստիկան չեղած ատեն՝ անոր կույանձնէին իրենց երկրին հարկերը։ Ասոնց երկրին արևմտեան հիւսիսային կողմն էր Ափխազաց կամ Եգերաց թագաւորն, որ անկախ էր, և վրաց տիրել ուզելով խռովութեան պատճառ կ'ըլլար։

Աշոտ խաղաղութեամբ դառնալով ի վրահայոց՝ Տաշրաց գաւառէն անցաւ եկաւ Գեղամայ ծովուն ծայրը, Սևան կղզւոյն դիմաց՝ Բանակատեղ ըսուած տեղը, և հոն բանակեցաւ. յարմար առիթ էր հոս տեսաւորութեան Աշոտոյ և Մաշտոցի, այս երկու մեծանշան անձանց, որք համբաւով բոլոր աշխարհին ծանօթք՝ զիրար այլ ճանչնալ փափագէին. Աշոտ կ'ուզէր տեսնել այն սրբակրօն և գիտուն միայնակեացը, իր զըստեր (Մարիամայ) հիւրը, որ առանց իրեն չափ աշխատելու՝ ընդարձակ երկրի մը մէկ կողմէն մէկ այն կողմը երթալու, կղզւոյ մը մէջ դադարմամբ՝ թէ երկինք վաստղէր թէ մարդկանց սիրտը։ Իսկ Մաշտոց լսելով Աշոտոյ գործքերը, միացուցած քաջութիւնը և արդարութիւնը, իր նպատակէն և իր ջանքէն շատ հեռու չէր դնել իշխանին աշխատանքը, և փափագէր տեսնել այն աշխատանաց ոյժ և փառք տուող խաչը, զոր վասիլ կայսր ընծայ խաւրեր էր իշխանին, և նա միշտ հետը կուտանէր։ Տեսութենէն աւելի մեծ փափագ մամբ փութացաւ Մաշտոց՝ ելաւ կըղզիէն, եկաւ ի Բանակատեղն. հանդիպեցան իրարու երկու շնորհաւորքն. Աշոտ համբուրեց Մաշտոցի լուսափայլ երեսը և աջը. Մաշտոց այլ իշխանին խոնարհելով երկրպագեց անոր բազկաց և կրծոց զարդ խաչին, առաւ դրաւ աչքերուն վրայ և համբուրելէ չէր դադարեր։ Վսեմամիտ իշխանն չէր կրնար զրկել խաչաբարձը իր սիրածէն. կայսերատուր ոսկէկապ և մարգարտազարդ խաչը պարգևեց ճգնաւորին՝ որ աւելի ուրախութեամբ իրեն համար աղօթէ. անոր միաբան վանականաց համար այլ պարգևեց՝ իբրեւ կալուածք եկեղեցւոյն՝ հինգ գեղ, Յաւնաքսքերոյ՝ որ անմիջապէս ծովեզերքն է և թուի մօտ Բանակատեղին, Վարսեր (Ճրոճը), Գումաձոր, Բերդք, Ուռեաց-տաւի, որոց երեք առջինքն դեռ նոյն անուամբ ճանաչուին Սևանայ դիմաց ծովեզերքը. ասոնցմէ զատ այն ծովակէն ելող ձկանց մէկ մասը՝ որ արքունեաց կուտրուէր հարկի տեղ՝ վանքին թողուց. դարձեալ այգիներ երեսնու և Գառնոյ կողմերը։ Հաւանօրէն Աշոտ այլ մտաւ ի կղզին ի տեսութիւն նորաչէն եկեղեցեաց և վանացն, և իշխանական առատութեամբ ու բարեպաշտութեամբ աւելի շէնցընելով զՍևան՝ դարձաւ իր երկիրը։

Ժե. իշխանապետն իր խնամոց յանձնուած երկիրներուն հիւսիսակողմը ապահովելէն ետեւ՝ դարձաւ ի հարաւակողմն, Եմէնիկէն զրգուեալ և Ահմէտը զրգուող ամիրաներն այլ նուաճելու. որոց գլխաւորն էր Մէլազկերտի կամ Ապահոնեաց ամիրայն Ապլաբառ կայսիկ ցեղի։ Մեր պատմիչք այսպէս կ'անուանեն Արաբացի Քայս ցեղ մը և ցեղապետ մը, որ Աբրահամայ որդւոյ իսմայէլի զաւկներէն սերեալ կ'ըսուի. և Մահմէտի ատեն կույն յիշուի

Ժե. իշխանապետն իր խնամոց յանձնուած երկիրներուն հիւսիսակողմը ապահովելէն ետեւ՝ դարձաւ ի հարաւակողմն, Եմէնիկէն զրգուեալ և Ահմէտը զրգուող ամիրաներն այլ նուաճելու. որոց գլխաւորն էր Մէլազկերտի կամ Ապահոնեաց ամիրայն Ապլաբառ կայսիկ ցեղի։ Մեր պատմիչք այսպէս կ'անուանեն Արաբացի Քայս ցեղ մը և ցեղապետ մը, որ Աբրահամայ որդւոյ իսմայէլի զաւկներէն սերեալ կ'ըսուի. և Մահմէտի ատեն կույն յիշուի

գիտնական մը այն ցեղէն Ասէմ՝ իսկ-
 ֆալս։ Ը. դարուն մէջ Արարացուց բը-
 նարարութեան ատեն այս ցեղէն մէկն
 այլ բռնացաւ վանայ ծովուն բոլոր հիւ-
 սիսակողմը տարածեալ երկրին վրայ.
 մէկ կողմէն (արեւելքէն) ինչուան Ամկու
 երկիրը վանայ մօտերը, մէկայլ կողմէն
 (արեւմուտքէն) ինչուան մեր Հայկայ նա-
 հապետական Հարք գաւառը. քիչ ա-
 տենէն իշխանութիւնն յերկու բաժնուե-
 ցաւ. արեւելեանն իրեք գլխաւոր քա-
 դաք և գաւառ ունէր, իրաթ, Արճէշ և
 Բերկրի, հանդերձ Ամիւկ ամուր բեր-
 դան, որ (եղբինս) յետոյ զատ իշխա-
 նակալութիւն մ' եղաւ. արեւմտեանն
 այլ իրեք գաւառ, Կորի Հարք և Ապա-
 հունիք, այս եղբինիս արեւմտեան ծայրն
 և Հարքայ սահմանակից հին քաղաքա-
 ւան մը կար և կայ, Մանազկերտ, հի-
 մայ Մէրազկերտ, և աւելի առաջ Մա-
 նաւազակերտ կոչուած և շինուած յոր-
 դոյն Հայկայ 'ի Մանաւազայ. որով
 թերեւ Հայաստանի և բոլոր աշխարհիս
 ամենէն հին մնացեալ քաղաքաշէնն է,
 գոնէ ամենէն հիներէն մէկն. հոս կու
 նստէր արեւմտեան երկիրներուն կայսիկ
 ամիրայն, և կոչուէր տէր Ապահունեաց
 կամ Մանազկերտոյ, և իւրաքանչէր
 կոչ իշխանէն աւելի զօրաւոր, ու մեր-
 ձակայ Հայոց այլ պատկառելի էր։ Բայց
 Աշոտոյ իշխանապետութիւնն անոր վը-
 րայ այլ տարածուեցաւ, և անկէց այլ
 հարկ կ'առնուր, ինչպէս յիշխանացն
 Հայոց. այս բանս որչափ այլ ծանր էր
 կայսիկն՝ չէր համարձակեր Աշոտոյ հա-
 կառակելու. ինչուան որ Եմէնիկն և
 Ահմէտ իրեն յոյս տուին. քիչ մ' այլ
 մեր սահմանակից իշխանքն պատճառ
 եղան զինքը ուռեցնելու. որով հարկը
 կտրեց յԱշոտոյ։ Իշխանապետն այլ ե-
 կաւ զօրքով. իւրաքանչէր և Բերկրոյ տէրն
 Ապահմէրթ հպատակեցաւ և հաստատե-
 ցաւ յիշխանութեանն. իսկ Ապահու-
 նեաց տէրն Ապարառ ամրացաւ 'ի
 բերդն Մանազկերտոյ. Աշոտ անոր մէկ
 այլ երկիրները նուաճելով՝ բերդն այլ
 պաշարեց. և մինչդեռ մօտ էր տիրելու՝
 Արծրունեաց երկրին շփոթութիւնները

լսելով՝ փութացաւ հոն դառնալու. հոս
 խաղաղութեամբ զերջացնելով գործը,
 հաւանեցուց զանհաւան կայսիկն իր չա-
 փին մէջ մնալ, և թղթով այլ դաշինք
 դնելով՝ հաստատեց զնա յիշխանու-
 թեանն, և հարկերն առնելով զնաց։

Իսկ Արծրունեաց շփոթութիւնքն չա-
 տոնց սկսեւ էին, գրեթէ Ահմէտ ոստի-
 կանին և կայսիկն մէկտեղ եղած ա-
 տեն. որք երբ զատուեցան, այս ետրի-
 նիս խորամանկութեամբ՝ բանսարկու
 մարդիկ Արծրունեաց և Տարօնոյ իշխա-
 նաց մէջ կասկած և պաղութիւն ձգե-
 ցին, մինչդեռ երկուքն այլ Ապահու-
 նեաց երկիրն էին, ամիրայէն հրաւի-
 րուած, որսի պատճառաւ։ Նախ Արծրու-
 նեաց իշխանն՝ Դերենիկ՝ անոր քովէն
 հեռացաւ, յետոյ Տարօնոյ իշխանն Ա-
 շոտ Կուրապաղատ (որդի Բագարա-
 տայ), զոր և խարդախութեամբ բը-
 նել տուաւ Դերենիկ և իր երկրին մէջ
 բանտեց 'ի Սեան ամուր բերդն, ու իր
 Հասանիկ քեռորդոյն պատուիրեց որ
 արձակ պահէ. և Աշոտոյ տեղ դրաւ ա-
 նոր եղբայրը՝ Դաւիթ Արքայիկ կոչուա-
 ծը, որ և իր քեռայրն էր, և Ահմէտի
 այլ գրեց ու հաստատեց զնա յիշխա-
 նութեան Տարօնոյ։ — Կուրապաղատն
 իմացուց իր վտանգը Գէորգայ կաթու-
 ղիկոսի՝ որոյ սիրելի էր. և նա անձամբ
 եկաւ աղաչեց Դերենիկայր բայց սա յանձն
 չառաւ աղատել զԱշոտ, և հոգևոր Տէրն
 տրտմութեամբ դարձաւ. իսկ մեր իշ-
 խանապետն այս ատեններս հիւսիսայ-
 նոց հետ զբաղած էր։ Կուրապաղատին
 ճարն հասնելով՝ սկսաւ ընտանեան իր
 բանտապանին, այսինքն Հասանիկն՝ որ
 դեռ 15 կամ 16 տարուան պատանի
 մ' էր, և տղու պէս խաբեց, հաւատա-
 ցուց թէ Դերենիկ իրեն դէմ այլ կու
 մտածէ և զինքն այլ պիտի բռնէ. պա-
 տանին՝ իր ամուր բերդին վրայ վստա-
 հացած՝ մտածեց իրեն որսորդը որսալ.
 հիւանդ ձեացաւ և աղաչանք խաւրեց
 Դերենիկայ՝ որ զայ զինքը տեսնէ. սա իր-
 ք օրհասական հիւանդի մը քով փու-
 թացաւ երթալու, և առջի տեսութե-
 նէն ետեւ՝ երբ գիշերը քաշուեցաւ իրեն

համար պատրաստուած սենեակը, յանկարծ դուռը վար առին և ներս թափեցան ջահաւոր և զինաւոր մարդիկ, բռնեցին զինքը և ամրոցին ծայրը հանեցին բանտեցին, ու զԱշոտ արձակեցին։ Այս բանս լսեց մեր իշխանապետն երբ Մանազկերտը պաշարած՝ մօտ էր առնուլ. և փութացաւ ուրիշ իշխաններով Սեանայ բերդին քով՝ իր փեսայն ազատելու՝ կաթուղիկոսն այլ եկաւ, և երկուքն այլ յորդորելով և խրատելով զպատանին Հասանիկ՝ հաւանեցուցին և արձակեց զքեռին. և իրեն ապահովութեան համար՝ պատանդ թողուցին քովը Դերենկայ երկրորդ տղայ որդին՝ Գազիկը, (յետոյ Արծրունեաց զիւցաղն)։ — Բայց Դերենիկ քիչ աւտենէն զրաժ դաշինքը ոտքի տակ առնելով բռնեց զՀասանիկ, բանտեց ի Նկան բերդի, և անոր Սեան բերդին այլ տիրեց, բայց քիչ մը իր աներէն ակն ածելով, քիչ մ'այլ ուրիշ միտք ունենալով արձակեց զՀասան. եւ քիչ մ'աւտեն հանդարտութիւն եղաւ (885-7), այս կողմերս այլ, ինչպէս ուրիշ ամէն Աշոտոյ իշխանապետութեան տակ եղած տեղերն այլ, ուր՝ ինչպէս տեսանք, հրեսուն տարիէ աւելի էր՝ որ Աշոտ անդադար անխոնջ տեղէ տեղ վազելով և հասնելով՝ խռովութիւնները կու խաղաղէր, ալիքները կու ցածցընէր, և հանդարտաբեր հովու պէս կու փարէր գուրգուրար ամէնուն վրայ. եկաւ ժամանակն՝ որ իր զրկած գգուած իշխանազունը այլ իրենց ալէզարդ հայրագիրը մեծարեն արժանաւոր սիրով և պատուով, որուն հաւանեցան ուրիշ իր խնամքը վայելող իշխանը այլ, չնախանձեցան և այլազգիք. իսկ հասարակաց հայրն կամ՝ մայրն հայաստան՝ հեծկըլտած հառաչանքը լռեց, հանգչեցան։ Սեւ տխրութեան բացած ու մաշած ճամբաներէն իջան ճերմակ ուրախութեան արտասուքներ. բարձրացաւ ձայն գոհութեան առ Աստուած, և թերևս ոչ այնքան Աշոտոյ գլուխը թագաւ փառազարդեալ տեսնելուն, որչափ այն թագը արդեամբք, երախտագիտու

թեամբ և սիրով կապուած և զրուած տեսնելուն։

ԺԶ. Այս երախտագէտ և սիրոյ ըզզացմանց և գործոց առաջնորդը եղան, ինչպէս որ կու վայելէր, երկու Գրիգորքն, Սուփան Սիսական՝ թոռն մեր Աշոտոյ, և Դերենիկ Արծրունի՝ փեսայ Աշոտոյ, իրենց աշխոյժ և կայտառ զաւակօքն, որոց միաբանեցան վաստակ իշխանիկն՝ Սիւնեաց տէրն, կաթուղիկոսն Գէորգ, և գրեթէ ամէն աշխարհատէր և զաւառատէր իշխանք և թեմակալ եպիսկոպոսունք, հանդերձ վրաց և Գուգարաց մեծամեծ իշխանօք, որոց շատն խնամի այլ էին իշխանապետին, և բոլոր իր ազգակից և բարեկամ իշխանաւորք. որք ամէնքն այլ Աշոտոյ պարտականք էին մէկ մէկ կամ շատ կերպով, անոր 33 տարուան սպարապետութեան և իշխանապետութեան ատեն, մանաւանդ թէ հօրը գործակցութիւնն այլ մէկ տեղ սեպելով՝ իր 50 ամեայ աշխատանայր, գործոցը, խնամոցը և փառացը՝ պարտականք էին. անոնց հաւասար ազգային զօրագունդն այլ, որ այնքան տարիներ միշտ փառօք և քաջ առնուամբ հայկական դրօշը կրեր տարեր էր զանազան կողմեր, և այլ աւելի բարձրացնելու կու սպասէր։ — Թերևս ասոնցմէ այլ աւելի՝ ռամիկ ժողովուրդն, խոնարհ և տկար սեպուածքն, որք իբրեւ զհայր ճանչնային և սիրէին զբարեբարն Աշոտ. և աւելի համարձակ առ Աստուած աչքերնին վերցուցած իրենց բարերարին բարիք և փառք մաղթէին, քան թերևս իշխանքն՝ ամիրապետէն խընդրէին, որ այնուհետեւ փոխանակ օտար ոստիկանի՝ իրենց համազգին իրենց շնորհէ անկախ գլուխ, ուղղակի հարկատու իրեն (ամիրապետին), Աշոտոյ իշխանութեան տակ արդէն ոչ միայն իրենք երջանիկ եղած էին, այլ և խալիփայք զանգատ մը չունէին այնչափ երկար ատեն, մինչ օտար ոստիկանաց տակ անդադար շփոթութիւն կ'ելլէր, արիւն կ'ըլլար, երկիրն կ'աւրուէր, զանձերն պակսէին։ Ամիրապետն՝ Մովսէս մէտ-Պիլլահ՝ որ 17 տարի իր իշխանու

թեան ատեն, և նոյնչափ այլ իր հինգ նախորդաց ատեն՝ վկայ էր նախարարաց նուիրակին ըսածներուն, և Աշոտոյ հաւատարմութեան եւ արդեանց դէմ կենալու բան չունէր, և ոչ որ այլ կրցաւ նախանձորդ կամ հակառակորդ ըլլալ. մէկ կողմանէ այլ տեսնելով որ արդէն իր կրօնակիցքն իրմէ կ'ապրատամբին, նոր նոր տէրութիւններ կանգնեն, յօժար սրտիւ հաւանեցաւ Հայոց խնդրուածին. և որովհետեւ ասոնք հին ատեն իրենց ազգապետը միշտ թագաւոր ճանչնային, անուանեց հիմայ անոնց իշխանապետը Աշոտ քաղաւոր Հայոց, վրան թողլով վրաց կողմի վերատեսչութիւնն այլ: Եւ ոչ միայն անունը խաւրեց՝ այլ և թագ և ամենայն թագաւորական նշաններ և զարդեր, հանդերձ ծանր ծանր արևելեան ընծաներով և ընտիր արաբիկ ձիերով. զորոնք տանել տուաւ Յիսէի՝ Շէխեայ որդւոյ, Ամգայ կողմնապետին, որ իր կողմանէ տանի տայ և թագաւորեցնէ զԱշոտ, գիտելով որ ասոր խոհեմութիւնն շատոնց զՅիսէ բարեկամ էր ըրեր իրեն. և յիրաւի Յիսէ աննախանձ զուարթութեամբ գնաց պատուեց և պսակեց իր հին բարեկամ և նիզակակիցը. ինքն այլ անկէ պատիւ գտնելով՝ դարձաւ իր տեղը: — Աշխարհական տիրապետէն թագը ընդունելէն ետեւ՝ կու մնար որ իր հայրենիքն և իր եկեղեցին այլ զինքը պսակէ:

Ո՛ր քաղաք, որ եկեղեցի էր արդեօք ուր պսակեցաւ Հայոց նոր թագաւորն. Երազգաւորք եթէ Գուլին. — կ'երևի թէ այս յետինս, որ 500 տարիէ վեր Հայաստանի մայրաքաղաք ճանաչուէր, և մարդպանաց ու ոստիկանաց աթոռ էր. դեռ հոն էր Հայոց հայրապետանոցն այլ. և դեռ կանգուն էր Ս. Գրիգորի հոյակապ կաթողիկէն (չինեալ Գ. Ներսէս կաթողիկոսէ) որ յետ վեց եօթն տարւոյ պիտի կործանէր, և կարծես կու սպասէր այս հանդիսիս այլ. որուն համար շատնեղ և շատ պզտիկ կու գար, բայց զոնէ բաւական իշխանազանց և եպիսկոպոսաց և բազմաթիւ բաղդաւո-

րաց: Այս եկեղեցին չէր, բայց հաւանօրէն այս տեղս էր, ուր մեր հայրապետաց վսեմագոյնն՝ մեծն Սահակ օրհներ օծեր էր Արշակունեաց վերջին թագաւորը, զդժբաղդն Արտաշէս. անշուշտ առաջին անգամն էր որ Հայոց սրբազան լեզուաւ և գրով թագաւորօրհնէք եղաւ. և առաջինն վերջին այլ եղաւ... Արտաշիսի օծմանէն մինչև յԱշոտ գրեթէ 470 տարի անցեր էր. սա կանգնեց անոր կորացեալ գլուխը, և Սահակայ թագաւորաշնորհ շունչը քառասուն կաթողիկոսաց չրթունքէն սահելով՝ Գէորգայ բարեբաղդ բերանը իջաւ, իր քահանայապետութեան ժի տարին. «կոչեցաւ ապա անդ մեծ հայրապետն» Գէորգ, և զհոգևոր օրհնութեանցն» գովութիւնս աստուածայինս՝ ի վերայ» կատարեալ, փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակէ գնա թագաւոր ի վերայ Ասքանազեան ազին» : Ինչ կարգաւ, ինչ ծիսիւ, ինչ աղօթքով կամ օրհնութեամբ եղաւ այս պսակս. արդեօք Ս. Սահակայ շարադրած և հին Հայոց ձևով և գոյմամբ էր այս թագօրհնէքս, եթէ Գէորգ կաթողիկոս նոր շարադրեց, կամ թէ Յունաց կայսերաց ծիսին հետեցան. — ասոնք՝ Հայկակ, քեզ այլ, ինձ այլ փափագելի են ի յայտնութիւն: Մեր յետին կիւրիկեցի թագաւորաց օծման գեղեցիկ հանդէսն և կարգն՝ հանդերձ օրհնութեամբքն, անծանօթ չէ մեզի. անկէ զատ հանդիպած եմ ուրիշ թագաւոր օրհնէքի մ'այլ, աւելի կարճ և անզարդ, որ և աւելի հին երևի, և ոչ անյարմար այս դիպուածիս. կարծեմ քեզի այլ անհաճոյ չըլլար լսելու այս կարգը և աղօթքները: Փութա ուրեմն ի Գուլին, խառնուէ այն բաղդաւորաց հետ՝ որ եկեղեցւոյն մէջ տեղ գտան Հայոց թագաւորութեան նորոգութիւնը տեսնելու, և անհամբեր աչք ի խորանն կու սպասեն նորընտիր թագաւորին՝ որ դեռ չերևիր, այլ գահն դրուած է, և չորս դին շարուած Աշոտոյ պայծառ եղբարքն, որդիքն և թոռունքն, երեսնիւ չափ, թերևս և իր տիկին դստերքն հանդերձ հե-

զանազ օրիորդովք, իր ամէն ազգա-
տոհմն և խնամիք, և ամենայն իշխանք
Հայոց և շատք՝ ի վրաց և Աղուանից, նաև
ամիրայք և դրացիք, և դապք քահա-
նայութեան՝ ի հայրապետէն մինչև ի
դպիրս: Արդէն ճրագունք վառեալք,
կանթեղք և ջահք փայլատակեն, և ար-
ծաթ և ոսկի բուրվառաց և խնկանոցաց
անուշահոտ ծուխն թեթև ամպերով կու
բարձրանայ. մեծ ակնկալութեամբ սրբ-
տեր կու թնդան, ծովանման շնկոց մը
կու լսուի, երեկոյեան հովուն խաղաղե-
լուն պէս լուծիւն մը կու տիրէ. դար-
ձեալ մեծ աղաղակ մը կու փրթի... Ա-
շոտ... Աշոտ. սուրբ թագաւոր... կեց-
ցէ, կեցցէ, կու հնչէ հազար օրհնեալ
բերան, բիւր կորովաշունչ կոկորդ հայ-
կական. և խորանին ամպացեալ ծխոց
խնկոց ետեւէն, ինչպէս ամպոց վերեւէն
Մասեաց դագաթն, կ'երևի բարձր վե-
մաշարժ զուարթահայեաց արծաթա-
փայլ զլուխ մը... մեծն Աշոտ...: Թող
ծափեն զօփեն ձայնեն ցնծան սիրուն
կտրիճքն: «Եւ զգեցուցանեն զթագա-
» ւորական զհանդերձան. ուրոյն զքղա-
» միդն և զթագն դնեն ի վերայ սուրբ
» սեղանոյն արծաթէ սկտեղք: Ասելով
» սաղմոս ի թիւ. Լուր Տէր աղօթից ի-
» մոց. և Ո յուսայ ի Տէր. Խոստովան
» եղէց քեզ տէր: Եւ ելանէ հայրա-
» պետն և կայ առաջի սրբոյ սեղանոյն,
» կալով զհեա նորա, որ պսակելոցն է
» զնա: Եւ յետ սաղմոսին սարկաւազն
» քարոզէ ասելով, խնդրեսցուք հաւա-
» տով. եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս,
» Որ թագաւորդ ես թագաւորաց ֆրիս
» տոս, և տէր տերանց, արարիչ ամե-
» նայն արարածոց, փրկիչ աշխարհի.
» տուր մեզ զխնդրուածս մեր, և կա-
» տարեա ի բարի զաղօթս մեր՝ զոր մա-
» տուցանեմք քեզ առաջի սրբոյ սեղա-
» նոյս. զի հաստատուն և անշարժ պա-
» հեսցես զուխտս սրբոյ եկեղեցւոյս,
» տալով զսա (զԱշոտ) մեզ՝ զոր ընտրե-
» ցեր և կոչեցեր վերադիմել ի թագա-
» շորութիւն, ի վերակացութիւն տանս
» Թորգոմայ, առ ի հովուել խնամով,
» և պահեա ի թշնամեաց. զի զկաթու-

» ղիկէ եկեղեցի բարձրացուցեալ և պը-
» սակեալ փառք նորոգ պահեսցէ. և
» զեղջիւր հաւատոյս մերոյ անսասանե-
» լի և անշարժ ուղղութեամբ եւ արդա-
» լութեամբ վարեսցէ ընդ երկայն ա-
» ւուրս. բարեխօսութեամբ սրբուհւոյ
» Աստուածածնիդ. զի դու ես փրկու-
» թիւն մեր և ապաւէն և օգնական և
» քեզ վայելէ փառք իշխանութեամբ»:
«Եւ ապա ասեն կցորդ. Որպէս յետ
» աստուածասէր թագաւորին, և այլն:
» — Եւ ևս խաղաղութեան. և այլն: Ե-
» պիսկոպոսն, Օրհնութիւն և փառք, և
» այլն: Եւ եպիսկոպոսն առեալ զաջոյ
» ձեռանէ նորա և դարձուցանէ զերեսն
» թագաւորին առ ժողովուրդն, ի ծուն-
» կըն անկեալ, և ասեն քահանայքն
» միաբան բարձր ձայնիւ երիցս. Աս-
» տուածային և երկնաւոր շնորհ՝ հե-
» ղեալ ի վերայ (Աշոտոյ), կոչեն յա-
» թոռ թագաւորութեան տանս Թոր-
» գոմայ, օծանել ըստ նմանութեան
» կոստանդիանոսի մեծ թագաւորին»:
«Եւ ասացեն, Եղիցի եղիցի. ամէն:
» Եւ ապա դարձուցանէ ի սեղանն և
» այս կանոն կատարի. Սաղմոս կցորդ, Ի,
» թագաւոր յուսացաւ ի Տէր: Պօղոսի
» առաք. ի Տիմոթ. Ա թղթ. ընթերց.
» (Բ. 1-7). Եւ արդ աղաչեմ, և այլն:
» Յովհան. առաք. յԱ կաթուղ. թղթ.
» ընթերց. (Բ. 20-27). Եւ դուք օ-
» ծութիւն ունիք, և այլն: — Ալէլուիա
» ալէլուիա, Լուիցէ քեզ Տէր յաւուր
» անձկութեան, և այլն: Սուրբ առե-
» տարանս ըստ Ղուկասու (ԺԺ. 12-28).
» Ասէ Յիսուս. այր ոմն ազնուական,
» և այլն: — Եւ սարկաւազն քարոզէ,
» խնդրեսցուք հաւատով: Եւ եպիսկո-
» պոսն ասէ զաղօթս. Տէր Աստուած
» մեր, որ թագաւորդ ես թագաւորաց,
» որ ի ձեռն Սամուէլի մարգարէին ըն-
» տրեցեր զծառայն քո զԴաւիթ, և օծեր
» զնա թագաւոր ժողովրդեան քում իս
» րայէլի. դու և այժմ, Տէր, լուր աղա-
» շանաց մերոց անարժանիցս, և նայ-
» եաց ի սրբոյ բնակութենէդ քումն
» յերկնից ի հաւատարմական ծառայս
» քո (Աշոտ), զոր ընտրեցեր և հաճե-

» ցար յարուցանել թագաւոր 'ի վերայ
» ազգի քո սրբոյ, զոր փրկեցեր պա-
» տուական արեամբ Միածնի Որդւոյ
» քո. օծանել զսա արժանաւորեալ իւ-
» ղով ցնծութեամբ. զգեցո՛ սմա զօրու-
» թիւն 'ի բարձանց. դիցես 'ի վերայ
» գլխոյ սորա պսակ 'ի քարէ պատուա-
» կանէ. շնորհեա սմա զերկայնութիւն
» աւուրց. տուր աջոյ սորա յաղթանակ
» փրկութեան. հաստատեա զսա յա-
» թոռ արդարութեան. շրջափակեա
» զսա զինու սուրբ Հոգւոյդ. Հնազան-
» դեցո սմա զամենայն բարբարոսական
» ազգս: Սերմանեա 'ի սիրտ սորա զեր-
» կիւղ քո եւ զլսողութիւն կենակցա-
» կան: Հաստատեա զսա անբիծ հաւա-
» տով, և 'ի վեր երևեցո՛ սմա զօրու-
» թիւն քո. պահեա 'ի պահպանութիւն
» սրբոյ քո կաթողիկէ առաքելական եւ
» կեղեցւոյ ուղղափառ դաւանութեամբ.
» զի դատեսցի զժողովուրդս քո արդա-
» թութեամբ, և զաղքատս քո իրա-
» ւամբք. կեցուցէ զորդիս տնանկաց.
» և ժառանգորդ լիցի արքայութեանդ:
» Քանզի քո է զօրութիւն և փառք, յա-
» լիտեանս, ամէն:

» Ապա առնու եպիսկոպոսն զքղա-
» միդն 'ի սեղանոյն, և զիիյունն. և տա-
» ցէ քահանայիցն զի արկեցն զնովաւ.
» և 'ի շուրջ առնուլն նորա զայն՝ եպիս-
» կոպոսն ասէ. խաղաղութիւն ամենեւ-
» ցուն, և դնէ զաջն 'ի վերայ գլխոյ թա-
» գաւորին և ասէ. Քեզ միայնոյ թագա-
»ւորիդ յաւիտենից՝ որ 'ի վերայ երկրի
» զթագաւորութիւն սորա հաստատե-
» ցեր, որ խոնարհեցոյց զպարանոց իւր
» ընդ մեզ. և արդ մեք ծառայք քո
» խնդրեմք 'ի քէն՝ Աստուած ամենայ-
» նի, պահեա զսա ընդ հովանեաւ քով
» աջովդ, և զօրացո զսորա թագաւորու-
» թիւն, զհաճոյս քո առնել յամենայն
» ժամ. ծագեա յաւուրս սորա արդա-
» թութիւն, բազում խաղաղութիւն ժո-
»ղովրդեան. հանդարտութեամբ սորա
» խաղաղական ապահովական կենցա-
»ղաւ բնակեսցուք ամենայն բարեպաշ-
»տութեամբ. զի դու ես թագաւոր խա-
»ղաղութեան Քրիստոս Աստուած մեր.

» և քեզ վայելէ փառք, իշխանութիւն,
» և այլն:

» Ապա առնու հայրապետն զմեռոնն,
» և օծանէ զգագաթն և զճակատն, ա-
» սելով. Օրհնեսցի, օծցի և սրբեսցի
» թագաւորս այս՝ յանուն Հօր և Որ-
» դւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ զայս երիցս
» ասէ եպիսկոպոսն: Ժողովուրդն ա-
» սեն, ամէն: Եւ ապա ասի. Տէր, կեցո՛
» զթագաւորն և լուր մեզ: Ապա առ-
» նու եպիսկոպոսն երկդրին ձեռքն ըզ-
» թագն 'ի սեղանոյն, և պսակէ զնա և
» ասէ. Օրհնեսցի, օծցի և սրբեսցի
» թագս և թագաւորս այս, յանուն Հօր,
» և այլն: Եւ ժողովուրդն զնոյն ասեն.
» Տէր կեցո՛ զթագաւորն և լուր մեզ:
» Եւ ասէ, Օրհնութիւն և փառք, և
» այլն:

» Եւ նոյն ժամայն մտանեն 'ի ճաշու-
» ժամն, և պատարագ մատչի. և զթա-
» գաւորն տանին 'ի սեղանն. 'ի ձախա-
» կողմն կանգնեսցի. և յետ պատարա-
» գին հաղորդեն զթագաւորն. եւ պա-
» տարագին գիրքն զթագաւորացն կար-
» դան:

» Բայց թագաւորն զգոյշ կացցէ յա-
» մենայն ճանապարհսն Աստուծոյ եր-
» կիւղիւ և սրբութեամբ:

Կրննա՜նք արդեօք հիմայ սրբազան
պատկառանք, հոս յարմարցընել գե-
րագոյն երգոց խօսքը և փոխանակելով
ընդ Սողոմոնի՝ ըսել. « Ելէ՛ք և հայեցա-
» թուք, դատեք Այրարատայ, յարքայ
» Աշոտ, 'ի պսակն՝ որով պսակեաց զնա
» մայր իւր, յաւուր փեսայութեան իւ-
»րոյ և յաւուր ուրախութեան սրտի
» իւրոյ »: Կրննա՜նք արդեօք նոյնպէս
շարունակել. « Ահա գահոյք Աշոտոյ.
» վաթսուն հազար սպառազէնք շուրջ
» զնովաւ 'ի քաջացն թորգոմազանց.
» ամենեքեան սուսերաւորք և աղեղնա-
»ւորք՝ հմուտք պատերազմի, այր իւ-
»րաքանչիւր սուր յազդեր յարհաւրաց
» գիշերոյ », և կապարճք 'ի թիկունս
վառեալք 'ի ճառագայթից տունջեան:
Կրննա՜նք դարձեալ աւելցընել յարմար-
ցընել, մեր պատմչին խօսքէն խրախոյս
տուած, թէ և « Գահաւորակ արար իւր

» արքայ Աշոտ 'ի փայտից Բասենու '»,
և այլն . վասն զի ինչպէս յամենայնի
վայելուչ և բարեկարգ էր Աշոտ, թա-
գաւորութիւնն այլ արժանապէս վայել-
չացուց մեր նախնի թագաւորաց և ազ-
գին պերճասիրութեան համեմատ. «Այ-
» նուհետև բազում և երևելի կարգս
» յօրինէր յաշխարհի տէրութեան իւ-
րոյ . յօրինուածս տանց, ազգաց, քա-
» ղաքաց, շինից, դաստակերտաց, և
» հարթ հաւասար ընդ իւրաքանչիւրոցն
» կատարէր կարգս լեռնականաց և ջեր-
» մահովիտ բարեխառն դաշտականաց .
» և զամենայն տափարակ տեղիս՝ ազա-
» րակս և զոմս դնէր, և զմարմանդս՝
» յայդիս և 'ի բուրաստանս զարդարէր .
» և զամենայն ինչ զոր ինչ օրէն է թա-
» գաւորութեան և որ ինչ 'ի թագաւո-
» րութեան և որ շուրջ զթագաւորու-
» թեամբ՝ ոչ ինչ իմիջ կասեցուցանէր .
» և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն
» քան զամենայն թագաւորութիւնս
» գտանիւր » : Իր փառքէն աւելի ազ-
գին օգուար վնասելը՝ յայտնի էր ամէ-
նուն . բայց ազգն զինքը պատուեց, ինքն
այլ իր փառքովն զազգը աւելի պա-
տուեց, նուիրելով այս ամէն վայելչու-
թիւն և փառքը ոչ իր անձին հաճոյից
և փափկութեան, այլ 'ի պերճութիւն
թագաւորին և ազգին Հայոց . ասոնք
բարձրացուցին զինքն իբրև զարեւ 'ի
վերայ հայրենեաց, պէտք էր որ ինքն
այլ ճառագայթէ անոնց վրայ զուարթ
և պայծառ լուսով : Այս լոյսս այս փառքս
ծագեցաւ յամին 887, գարնանային
կամ ամառնային եղանակին, յորում
այլարատեան հովտաց և բլրոց գեղեց-
կութեան խառնուեցաւ Հայոց համաշ-
խարհական ուրախութեան հանդէսն .
որ արդարև շատ մեծափայլ և պայծառ
եղաւ բոլոր իշխանազանց և եկեղեցւոյ
գլխաւորաց ու բազմախումբ ժողովրդ-
դեան ներկայութեամբ և պատրաստու-
թեամբ . բայց պայծառութենէն շատ
աւելի այլ սրտաշարժ էր : Վասն զի այն

ատեն մերազգիք իրենց չորս հինգ հա-
րիւր տարի առաջ նախնիքը և անոնց
փառաւոր օրերը աւելի լաւ ճանչնային՝
քան մենք մեզմէ առջի չորս հինգ դա-
րերը . անոնք դեռ նախարարաց, ազա-
տաց և քաջաց սերունդք և տոհմք էին,
և դեռ իրենց տիրազուլս նախահարց
դաստակերտներուն մէջ բնակէին, ա-
նոնց յիշատակները կու տեսնէին, ար-
ձանագրութիւնները կարդային, ազգա-
բանութիւննին գիտէին . անոնց գոր-
ծածած անօթները և զէնքերը դեռ զը-
տուէին իրենց մէջ . դեռ նոյն Հայկա-
զանց և Արշակունեաց գետինը կոխէին
և նոյն օդը ծծէին . անոնք դեռ հարա-
զատ հայախօսք էին . թէ և բազմավէր
բազմասպի՝ Հայաստանեայց մարմինն
դեռ ամբողջ էր . գլուխն չէր երևէր,
բայց երբ սիրտն դեռ կ'առնուր կու տար,
այնպիսի մարմնոյ մը դժուար չէր գլու-
խը գտնել կանգնել, որ հինգդարեան
հարուածներով կորացեր ուսերէն վար
կախուեր էր դէպ 'ի կուրծքն . և երբ ա-
մենայն անդամոց մէջ բարեխառն ջեր-
մութիւնն ծաւալեցաւ ու սիրտն մեծա-
պէս թնդաց, ճառագայթազարդ գլուխն
այլ դարձեալ բարձրացաւ, դարձեալ
եղաւ Հայաստան հսկողը հիշուաւ,
կանաւ վեհագոյն, և Կ.Պօլսոյ ու Բաղ-
տատայ, այն միայն երկու տիեզերակալ
աթոռոց մէջ մէկ թագաւորական գահ
մ'այլ կանգնեցաւ, մինչդեռ այնքան
մեծ տարածութեան մէջ ամէն գահ
կործանած մնացին . և այս առաջին կանգ-
նող գահն ու թագն՝ եղաւ Հայոցն . ան-
գամ մ'այլ Հայք իրենց հին հասակակ-
ցաց առջև յառաջագէմ գտուեցան . ան-
գամ մ'այլ կովկասէն ինչուան յԱպա-
ռաժն Արարիա, Պոնտոսէն ինչուան 'ի
Ժովն Պարսից՝ ամենայն հին և նոր ժո-
ղովուրդք ողջունեցին զԱյլարատ թա-
գակապ 'ի Բագրատունին Մեծն Աշոտ :

Ի սկզբան վարուցս Աշոտոյ ըսի և
դարձեալ կ'ըսեմ, շատ քիչ կրտրիճ
և առաքինի մարդ գտուած է՝ որ այս-
քան արդեամբք ծանրացեալ և հա-
սակաւ հասունացեալ հրաւիրեալ ըլլայ
'ի թագաւորութիւն, ոչ մեր ազգին պատ-

1 . Բասենի դաշտն Աֆայք անուանեցաւ հին ա-
տեն . բայց լեռներն ինչուան հիմայ անտառոտ են :

մութիւնն և ոչ թերեւս օտարաց յայսմ՝ Աշոտոյ համեմատ մը գտնեն. և եթէ սրբազան զարմանք մը բերէ պարսկն այն՝ ի գլուխ 12 տարեկան արքային Սուղոմոնի, սրբազան և սիրելի սխրանք ըլլայ ինձ և քեզ, Հայկակ, քագս այս ոսկի խառնեալ յարծաթ ալիս գրեթէ 70ամեան գլխոյ արքային Աշոտոյ. կարծեմ ոչ դը յաննախանձ զգաստից, որ ազգէ այլ ըլլայ, կըրնայ ուրանալ մեր Բագրատունւոյն փառքը, և մեզի ընկած պարծանքը: Այս յիշատակիս հետ անգամ մ'այլ յիշենք այս հայրենեաց հօր երախտագէտ որդւոց մեծագով և ազնուախոհ մտածութիւնն, որ անոր բազմամեայ անձնանուէր խնամոց արտաքին ցոյց փոխարինի տալ մտածեցին և յաջողեցան՝ զթագն Հայոց միազը խոսթան. և թերեւս յետ աւուրց Ս. Տրդատայ այս առաջին անգամ միասիրտ և միաբերան իշխանք զանազան աշխարհաց և գաւառաց Հայոց՝ կանչեցին և գրեցին Աստուծոյ հագոր կամ Աստուծոյ հապառ քագաւոր մեր. և նա գրեց իր հրովարտակաց և պարգեւադրաց տակ ոսկի կնքոյն քով՝ Աշոտ Բագրատունի քագաւոր Հայոց¹: Բայց աւելի քան զայս ոսկի կնիքներն և պսակներն, աւելի քան Յունաց կայսրէն զրկած թագն և երեքկրկին ոսկէկնիքն², աւելի քան զայն հարուստ ընծաներն՝ զոր թագաւորն ընդունեցաւ, և զոր կրկնապատիկ տուաւ և զրկեց մերձաւորաց և հեռաւորաց, աւելի քան զիշխանաց և ժողովրդոց իրեն ցուցած մեծարանքն և հը պատակութիւն, աւելի քան զզօրաց զինաշարժութիւնն, ռամկաց հանդէսն, աւելի քան զպատերազմական, քաղա-

քական և եկեղեցական փողոց և երաշքաւորութեանց ձայնակցութիւնն, քան զայս ամէնքն աւելի հաճոյական էր տեսնել զԱշոտ յարքունիան Շիրակաւանի, ի մէջ բազմասերունդ ընտանեացն, եղբարց, որդւոց և թոռանց, փեսայից և հարսանց, հին Հայկազանց և Եբրայեցւոց ջողգլուխ նահապետի մը պէս. տեսանել զարի արքայն Աշոտ ի գահաւորակի իւրում, որոյ սինք արծաթիք, կոնքն ոսկի, ձեղուն ծիրանի և մէջ նորա ականակապ, տարածեալ սէրն (բանուածք բաստեռանն) ի դստերացն թորգոմայ. — տեսնել այն հայրական և որդեկան գորովն ու խանդալատանքն, կտրիճներուն թափ թափ և շուտ շուտ շարժիլն, փափուկներուն հեզիկ նազելն. և այդ կայտառ ու պայծառ թիթեռնանման թռռնիկներուն վեր վեր ցատքտելն, պապուն վիզը պլլելիլն, ու թեթիկ թափիկներով՝ թագին դեռ իրենց անծանօթ ծանրութիւնը կշռելն, և մատիկնին մէկ մը անոր զարգերուն մէջ մէկ մը անկէ փայլուն ալեաց մէջ մտցընելն: Աստուածասէր և ընտելասէր տանուտէր նահապետ մը թագաւորական փառք պերճացեալ, արդարեւ այս է գոհարակապ ոսկի մատանին: Երանի... այնպիսի մատնին ի մատն հագնողին՝ թէ պագնողին:

Շարունակի

Հ. Ղ. Վ. Ա.

Ա. Ղ. Ա. Ի. Ն. Ի

թ.

Այն միջոցին դեռ Օրսոյ և Աղաւնի ճամբանին առաջ կը տանէին: Առջի բերան ձիերնին վազցուցած ատեննին չկրցան իրարու հետ խօսիլ. բայց երբ զառիվայրերէ ելլելու միջոցը կենդանիները կամաց կը քալցընէին, Այաչիոյ թողուցած բարեկամներնուն վրայ

1. Յանուն Աշոտոյ գրուածք դեռ ծանօթ չէ մեզի, բայց կան մնան դեռ իր որդւոյն Սմբատայ ստորագրութիւնն այս օրինակաւ գրողմած յամի 906. և մեծամեծ իշխանաց Սիւնեաց և Արծրունեաց ստորագրութիւնքն՝ կոչելով զնա Խագաւոր Բեր:

2. Վասն զի կայսրն բաց յամիրապետէն ուրիշ ամենայն արեւմտեան և արեւելեան թագաւորաց և իշխանաց և սրբազան հայրապետին՝ միակ կամ կրկին ոսկի գրամաշափ կնքով խաւրեր թուղթ, միայն մեր թագաւորաց անոնցմէ մեծ եռասպատիկ կնիք կու գնէր: